ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

ք. Գավառ ***05.12.2017 թ. ժամը 11.00***

Նախագահում էր ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Բոթոյանը, մասնակցում էին մարզի խորհրդի 57 անդամներից 50-ը:

Մասնակցում էին ՀՀ Գեղարքունիքի մարզպետ տեղակալներ Անդրանիկ Հակոբյանը, Կարեն Հակոբյանը, Արտաշես Նիկոյանը, մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Սևակ Խլղաթյանը, մարզպետարանի աշխատակազմի վարչությունների պետերը, բաժինների վարիչները, մարզի իրավապահ մարմինների ղեկավարներ և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Օրակարգում՝

1. 2017 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքային բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման արդյունքների մասին:

/Զեկ. Յուրա Մուշեղյան - մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ/

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքներում 2017 թվականի 2-րդ կիսամյակում իրականացված վարչական հսկողության արդյունքների մասին:

/Զեկ. Ալբերտ Աղեկյան – մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ/

3. <<Մաքուր Հայաստան>> ծրագրի շրջանակում Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում 2017 թվականի 2-րդ կիսամյակում իրականացված աշխատանքների մասին:

/Զեկ. Վանիկ Հարությունյան – մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ

4. Այլ հարցեր:

Հայտարարությունով հանդես եկան՝

Յուրա Մուշեղյանը - մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ

Վանիկ Հարությունյանը - մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ

Գարիկ Բաղալյանը - մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ

Մարզի խորհրդի աշխատանքներն ամփոփեց մարզպետ Կարեն Բոթոյանը:

1. Առաջարկվեց ՀՀ Գեղարքունիքի մարզի համայնքների ղեկավարներին՝

1) ամենօրյա աշխատանքներ տանել համայնքների 2017 թվականի բյուջեների սեփական եկամուտների /հողի հարկ, գույքահարկ, տեղական տուրքեր, հողի և գույքի վարձակալությունից եկամուտներ/ հավաքագրումը մինչև 2017 թվականի դեկտեմբերի 25-ը 100o/o ապահովելու և աշխատավարձերի գծով կուտակված պարտքերը մարելու ուղղությամբ.

2) 2018 թվականի համայնքային բյուջեների նախագծերը մինչև 2017 թվականի դեկտեմբերի 15-ը ներկայացնել. ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանում.

3) մարզի համայնքների ավագանիների նիստերում քննարկել մարզի համայնքապետարաններում 2017 թվականի 2-րդ կիսամյակում իրականացված վարչական հսկողության արդյունքում արձանագրված թերություններն ու բացթողումները և հետևողական աշխատանքներ տանել օրենսդրությամբ սահմանված ժամկետներում դրանք վերացնելու ուղղությամբ ու այսուհետ բացառել նմանատիպ թերություններն ու բացթողումները.

4) մինչև տարեվերջ ավարտել տնտեսվարող սուբյեկտների հետ աղբահանության պայմանագրերի կնքումը.

5) 2018 թվականի համայնքային բյուջեների նախագծերի տնտեսագիտական դասակարգման հոդվածով արտացոլել աղբահանության ծառայության մատուցումը.

5) ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի կողմից հայտարարված ՀՀ Գեղարքունիքի մարզի բնակավայրերի ամանորյա զարդարանքի «Լավագույն զարդարված քաղաք»և «Լավագույն զարդարված գյուղ» մրցույթներին մասնակցելու դեպքում մինչև 2017 թվականի դեկտեմբերի 25-ը ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի մրցութային հանձնաժողովին /նախագահ Զոհրապ Եգանյան/ ներկայացնել մինչև 2 րոպե տևողությամբ տեսաժապավեն և 20-ից 30 լուսանկար:

2. ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ Վանիկ Հարությունյանին, կրթության, մշակույթի ու սպորտի վարչության պետ Գարիկ Բաղալյանին և առողջապահության ու սոցիալական ապահովության վարչության պետ Անուշ Պողոսյանին՝ աշխատանքներ տանել մարզի համայնքների ղեկավարների, մարզային ենթակայության կազմակերպությունների տնօրենների հետ՝ հարկային պարտավորությունները չկատարած աշխատողների կողմից պարտքերը մարելու ուղղությամբ:

ՄԱՐԶՊԵՏ՝ ԿԱՐԵՆ ԲՈԹՈՅԱՆ